
ՈՍՏԻԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՎՐԱ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՍՈՑԻԱԼ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՆԱԻՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ

Մեր երկրի պատմական զարգացման ժամանակակից փուլում, հաշվի առնելով մեզանում քաղաքացիական հասարակության կայացման հիմնախնդիրը, ինչը բոլորովին նոր պահանջներ է ներկայացնում պետականության կերտմանը, առանձնահատուկ սոցիալական նշանակություն են ձեռք բերում իրավապահ համակարգի, այդ թվում նաև ոստիկանության բարեփոխումների, դրա գործունեության վերակողմնորոշման հարցերը: Ոստիկանությունը՝ որպես պետության իրավապահ կառույց, կարևոր դեր է խաղում խորը և տևական սոցիալական վերափոխումներ ապրող մերօրյա հասարակության կյանքում, որում առկա տարաբնույթ խնդիրները խիստ մեծացնում են ոստիկանին ներկայացվող ակնկալիքներն ու պահանջները: Ոստիկանության հանդեպ հասարակության հետաքրքրությունը պայմանավորված է նաև նրա գործունեության բնույթով, որը ենթադրում է բնակչության հետ ամենօրյա սերտ առնչություններ՝ ոստիկանին մշտապես պահելով հասարակության ուշադրության կիզակետում: Այս համատեքստում ավելի քան արդիական են ոստիկանի պատշաճ իմիջի և դրա ձևավորման վրա անդրադարձող գործոնների հետազոտության խնդիրները: Մասնավորապես, գիտական ու գործնական մեծ կարևորություն ունի ոստիկանի կերպարի վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումը, ինչը հնարավորություն կընձեռի աշխատել նոր, ժողովրդավարական պետությանը հարիր կերպար և բարձր հեղինակություն ունեցող ոստիկանության կայացման ուղղությամբ՝ նպաստելով ոչ միայն ոստիկանի մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը, այլև պետական իշխանության մարմինների հանդեպ բնակչության վերաբերմունքի բարելավմանը, քանզի ոստիկանի կերպարն ու գործունեությունը հաճախ դառնում են երկրում օրինականության վիճակի մասին քաղաքացիների վերաբերմունքի ու գնահատման չափանիշ:

Նախքան ոստիկանի կերպարի վրա անդրադարձող գործոնների քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է ճշգրտել «իմիջ» հասկացության (լատ. imago, անգլ. image՝ կերպար, արձան, սրբապատկեր և այլն) բովանդակությունը, քանզի մասնագիտական գրականության մեջ այն տարբեր կերպ է սահմանվում¹: Չնայած առկա տարակարծություններին՝ եղած սահմանումներում հիմնականում օգտագործվում է միևնույն սեմանտիկ (իմաստաբանական) հիմքը՝ կերպար հասկացությունը: Իմիջը (*հետայուն*՝

¹ Տե՛ս **Панасюк А. Ю.** Формирование имиджа: стратегия, психотехнологии, психотехники. М., 2009, էջ 11-13, **Ушакова Н. В., Стрижова А. Ф.** Имиджелогия. М., 2009, էջ 78-80, **Шепель В. М.** Имиджелогия. Как нравиться людям. М., 2002:

կերպար) ամենից հաճախ դիտվում է որպես սոցիալական օբյեկտի հանդեպ վերաբերմունք, կարծիք, սոցիալական դիրքորոշում, արժեքային կարծրատիպի տեսքով ամրագրված կերպար, կարծրատիպի բնույթ ունեցող հուզականորեն երանգավորված կերպար և այլն: Ընդհանրացնելով կերպարի վերաբերյալ պատկերացումները՝ տվյալ համատեքստում այն կարող ենք ձևակերպել որպես ոստիկանի՝ քաղաքացիների հոգեկանում ձևավորված հուզականորեն երանգավորված կերպար, որի հիմքը նրա անձնային և մասնագիտական որակներն են: Ոստիկանի կերպարի հոգեբանական բովանդակությունը նրա հանդեպ հասարակության դիրքորոշումը և վերաբերմունքն է, որը ձևավորվել է ոստիկանության մասին տարածված կարծրատիպերի հիման վրա: Ոստիկանի կերպարի նշված ձևակերպման դիրքերից էլ կդիտարկենք այդ կերպարի վրա անդրադարձող գործոնները:

Գրականության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվում ոստիկանի կերպարի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնների վերաբերյալ: Այսպես, Յու. Վ. Շաբալինան այդպիսիք է համարում բնակչության կողմից շրջապատող իրականության ընկալումը, անձնական և մերձավոր շրջապատի փորձը, ոստիկանի գործունեության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշները²: Ռ. Վ. Չերկասովը նման սոցիալ-հոգեբանական նախադրյալներ է համարում բնակչության, ինչպես նաև ոստիկանների մի մասի իրավական մշակույթի և իրավագիտակցության ցածր մակարդակը, քաղաքացիների մեծ մասի կողմից ոստիկանությանն ամենից առաջ իբրև պատժիչ (կառատել) մարմնի ընկալումը (այստեղ որոշակի դեր է խաղում իշխանության և դրա ինստիտուտների հանդեպ բացասական տրամադրվածությունը), հասարակական գիտակցության մեջ հանցավոր աշխարհի բարոյականության և բանտային բարքերի տարածվածությունը, որոնք ողջ իրավապահ համակարգի հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառ են դառնում³: Ա. Ա. Սյոմիկը ոստիկանի անձնավորված կերպարի պատճառներ է դիտարկում արտաքին հատկանիշները (հագուստ, կեցվածք, վարվելակերպ և այլն), սոցիալ-հոգեբանական բանիմացությունը, մասնագիտական պատրաստականությունը, իմացական ոլորտը, Ես-կերպարը, արժեքային ոլորտը և այլն⁴:

Ոստիկանի կերպարի ձևավորման գործում էական դեր ունի սոցիալ-հոգեբանական բանիմացությունը, որն ուղղակիորեն կապված է Ես հայեցակարգի հետ: Սոցիալական պատկերացումներն ազդում են բնակչության կողմից ոստիկանի ընկալման վրա, ինչն անդրադառնում է ոստիկանի Ես-կերպարի, ինքնագնահատականի, արժեքային ոլորտի, ըստ այդմ՝ նրա կերպարի վրա, ընդ որում՝ ոչ դրականորեն: Իր հերթին, դրսի ձևախեղված վերաբերմունքի հետևանքով ձևավորված Ես-կերպարը, ինչպես

² Տե՛ս **Бондаренко Т. А.** Имидж органов МВД в "милиейских телесериалах". http://www.ecsocman.edu.ru/images/pubs/2007/05/24/0000308250/Sotsis_09_06_p114-119.pdf

³ Տե՛ս **Черкасов Р. В.** СМИ и общественное мнение о милиции http://www.ecsocman.edu.ru/images/pubs/2007/12/19/0000318042/009_cherkasov.pdf

⁴ Տե՛ս **Семик А. А.** Психологическая природа имиджа сотрудников органов внутренних дел. <http://www.teoria-practica.ru/index.php/-1-2007/151-2009-09-05-00-43-09-189-2009-07-18-09-50-44>

նաև իր դիրքով անբավարարվածության պրոյեկտումը հասարակության վրա որոշում են ուստիկանի կողմից իրավապահ քաղաքացիների և իրավախախտների ընկալման բովանդակությունը: Հասարակական ճանաչման չիրականացած պահանջումները պատճառ է դառնում ուստիկանի՝ սեփական մասնագիտությունից հիասթափության, անզորության և թերարժեքության զգացումների առաջացման և այլ անցանկալի հետևանքների, որոնք բացասական ներգործություն են ունենում նրա կերպարի վրա:

Ուստիկանի կերպարի վրա որոշակիորեն անդրադարձող գործոններից է մասնագիտական ձևախեղումը (դեֆորմացիա)՝ որպես ուստիկանի անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բացասական փոփոխությունների ամբողջություն, որին բնորոշ են կոշտ մասնագիտական դիրքորոշումները, իշխանության չարաշահումը, յուրատիպ կազմակերպչական մշակույթի ձևավորումը և այլն: Ինչ վերաբերում է իշխանական լիազորություններին, որոնցով ի պաշտոնե օժտված է ուստիկանության աշխատակիցը, ապա դրանք հաճախ տանում են ծառայողական դիրքի չարաշահման, ինչը, անկասկած, իր անբարենպաստ հետքն է թողնում ուստիկանների նկարագրի ընկալման վրա:

Ուստիկանի հանդեպ հասարակության վերաբերմունքը շատ ավելի խորը արմատներ ունի և պայմանավորված է ուժային կառույցների նկատմամբ բնակչության պատմական պատկերացումներով, ինչը ուստիկանի կերպարին հաղորդում է ավելի կայուն բնույթ: Խորհրդային հասարակության մեջ ուստիկանությունը երկար ժամանակ խաղացել է սոցիալական վերահսկողության ռեպրեսիվ համակարգի լեգիտիմությունն ապահովող մարմնի դեր, ուստի մեր բնակչության զգալի մասը մինչ օրս ուստիկանին ընկալում է ամենից առաջ իբրև պատժիչ գործառույթներ կատարողի, որից ավելի նպատակահարմար է զգուշանալ և խուսափել:

Վ. Ա. Բոլոտովան առանձնացնում է ուստիկանության կերպարի ձևավորման երկու ուղղություն. մի դեպքում առաջանում է պատկերացում առանձին աշխատակցի մասին, ինչը հետագայում անցնում է ողջ կազմակերպության վրա, մյուս կողմից, ելնելով կազմակերպության կերպարից ընդհանրապես, դրա հանդեպ բացասական վերաբերմունքը փոխադրվում է առանձին աշխատակցի վրա, որի հետևանքով ցածր են գնահատվում ուստիկանների և՛ մասնագիտական, և՛ անձնային որակները⁵: Փաստորեն, ուստիկանի կերպարի ձևավորումը պայմանավորված է ոչ միայն ուստիկանության՝ որպես սոցիալական կազմակերպության իրավապահ գործառույթներով, այլև ուստիկանների անձնային և մասնագիտական հատկություններով:

Ընդհանրապես, մարդկանց պատկերացումները սոցիալական երևույթների մասին ձևավորվում են ինչպես անձնական փորձի, այնպես էլ պաշտոնական և ոչ պաշտոնական տարաբնույթ աղբյուրներից ստացվող տեղեկությունների հիման վրա: Կերպարը սոցիալական ընկալման արդյունք է, որն առաջանում է հասարակական ուշադրության կենտրոնում օբյեկտի գտնվելու դեպքում, երբ այն կարող է ընկալվել անմիջականորեն՝

⁵ Տե՛ս **Болотова В. А.** Имидж органов внутренних дел и их сотрудников. http://www.sociology.kharkov.ua/docs/chten_01.bolotova.doc

անձամբ կամ միջնորդավորված՝ կապի այլ ուղիներով⁶։ Կերպարի նախատիպի (օբյեկտի) հետ անմիջական շփման դեպքում ստացվող տեղեկությունը կոչվում է ուղղակի կերպարաստեղծ տեղեկություն, իսկ անուղղակի կերպարաստեղծ տեղեկությունը լսարանին է հասնում այլ մարդկանց միջոցով, որոնց մեջ արդեն ձևավորվել է օբյեկտի կերպարը։ Կերպարի ձևավորման գործում ուրույն տեղ ունեն, այսպես կոչված, կեղծ կերպարաստեղծ տեղեկությունները, ինչպիսիք են լուրերը, բանբասանքները, երբեմն էլ՝ տարաբնույթ մտացածին պատմությունները, որոնք չեն համապատասխանում իրականությանը։ Ընդ որում, որքան շատ է լուրի բովանդակությունը համընկնում կերպարի նախատիպի մասին մարդու ունեցած նախնական պատկերացմանը, այնքան ավելի են դրանք ընդունվում որպես ճշմարտություն⁷։ Այսպիսով, ոստիկանության մասին ուղղակի տեղեկություն քաղաքացիներն ստանում են ոստիկանների հետ անձնական փոխազդեցության փորձի հիման վրա՝ անմիջական առնչությունների կամ կողքից ոստիկանի վարքուբարքի ակնատես լինելու միջոցով։ Ընդ որում, այստեղ կարևորվում են ոչ միայն բուն կապերը, այլև ոստիկանության գործունեության մասին բնակչության տեղեկացվածության աստիճանը, որն ազդում է ոստիկանների գնահատման օբյեկտիվության, ինչպես նաև նրանց հանդեպ վստահության մակարդակի վրա։ Ոստիկանների մասին կարծիքի ձևավորման վրա ներկայումս վճռորոշ դեր են խաղում անուղղակի կերպարաստեղծ և մասամբ նաև կեղծ կերպարաստեղծ տեղեկությունները, որոնք ստացվում են մտերիմների հաղորդումների, պատահական խոսակցությունների, ՁԼՄ-ների, ֆիլմերի, ոչ պաշտոնական տարաբնույթ տեղեկությունների (լուրեր, մտացածին պատմություններ և այլն) միջոցով՝ այդպիսով ոստիկանի կերպարը բավականին հեռացնելով իրականությունից։

Ոստիկանի կերպարի վրա անդրադարձող գործոնների շարքում հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել զանգվածային լրատվամիջոցներին՝ որպես ոստիկանության մասին կարծիքների ձևավորման և տարածման էական գործոնի։

Տեղեկատվության աճող դերը ինքնաբերաբար մեծացնում է հասարակության բոլոր տեղեկտվական բաղադրիչների, այդ թվում նաև կերպարի նշանակությունը։ Գ. Գ. Պոչեպցովը կերպար-հեղինակության մասին խոսելիս նշում է, որ, ապրելով ոչ միայն իրական, այլև այսպես կոչված սիմվոլիկ աշխարհում, մարդը հաճախ հակազդում է հենց կերպարին, ոչ թե իրականությանը՝ օբյեկտի կերպարը ձևավորելով զանգվածային լրատվամիջոցների ազդեցությամբ⁸։

«Ձանգվածային հաղորդակցություն» եզրույթը կիրառելի է հրապարակային արտահայտման այն միջոցների համար, որոնց շնորհիվ ցանկացած հաղորդագրություն կարող է հասու դառնալ բնակչության լայնածավալ զանգվածների։ Դրանցից են կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը, թերթերը, գրքերը, պլակատները, բրոշյուրները, համացանցը, լուրերը և

⁶ Տե՛ս Ушакова Н. В., Стрижова А. Ф., նշվ. աշխ., էջ 77։

⁷ Տե՛ս Панасюк А. Ю., նշվ. աշխ., էջ 35-36։

⁸ Տե՛ս Почепцов Г. Г. Имиджология. М., 2009, էջ 15։

այլն: Ներկայումս սոցիալական աշխարհի կերպարի կառուցման և հասարակության դաստիարակության գործում զանգվածային լրատվամիջոցներն էական դեր են խաղում՝ հանդես գալով որպես զանգվածային գիտակցության ձևավորման ուղիներ և նպաստելով դիրքորոշումների ու արժեքային կողմնորոշումների համակարգի մշակմանը⁹:

ՋԼՄ-ներն էապես նպաստում են սոցիալական կարծրատիպերի (այդ թվում նաև ոստիկաններին վերաբերող) տարածմանը: Դրանց կողմից ընկալման օրինաչափությունների հմուտ օգտագործման շնորհիվ անընդհատ կրկնվող կերպարը՝ կարծրատիպը, արագորեն յուրացվում է՝ վերածվելով անհատական կամ զանգվածային գիտակցության գործոնի: Ինֆորմացիա սպառողի իմացական կառույց մտնելով՝ կարծրատիպը ենթարկվում է երկակի աղավաղման. առաջին անգամ մատուցվում է ՋԼՄ-ների տեսանկյունից, երկրորդ անգամ այդ կերպարն ընկալող անձը լրացնում է այն սեփական բացասական փորձի կամ այդ տեղեկության՝ կենցաղային դատողությունների ցանցի հետ համընկնման հիման վրա: Այսպես, հեռուստատեսությունը հաճախ առաջարկում է տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների (գործրինակ՝ ոստիկանի) իրականությունից հեռու պատրաստի կերպարներ՝ ամրապնդելով և տարածելով սոցիալական օբյեկտի մասին աղավաղված պատկերացումներ¹⁰:

ՋԼՄ-ներում ոստիկանության աշխատանքը հաճախ պատկերվում է իբրև կոշտ ռեպրեսիվ գործունեություն: Հեռուստահաղորդումներում և ֆիլմերում գերակշռում են բռնության տեսարանները, որոնց հիմնական սյուժեն կառուցվում է «լավ» և «վատ» հերոսների հակամարտության վրա: «Վատ» հերոսը (երբեմն այդ դերում հանդես է գալիս ոստիկանը) խախտում է օրենքը, իսկ «լավ» հերոսը ստիպված պատժում է նրան՝ բռնություն գործադրելով, քանի որ իրավապահ մարմինները դա չեն կարող անել տարբեր պատճառներով: Որպես բացասական հերոս ներկայացվելով՝ ոստիկանը կարծես կործանում է հասարակության մեջ իրավակարգի մարմինների և բնակչության միջև ձեռք բերված վստահությունը և փոխըմբռնումը: Հեռուստաէկրանին տեղի ունեցողը ընդունելով որպես իրականություն՝ մարդիկ սկսում են ենթադրել, որ ոստիկանների օգնության վրա հույս դնել չի կարելի, քանի որ ոստիկանությունը չունի հասարակության մեջ արդարությունը և կարգը վերականգնելու հնարավորություն:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են քաղաքացիների կողմից ոստիկանների մասին տեղեկություններին տրվող հուզական հակազդումների երեք տիպ. ա) հուզական վիճակ՝ կապված հանցավորությունից վախի և դրա դեմ պայքարում ոստիկանների անկարողության հետ, բ) վրդովմունք՝ կապված ոստիկանների ոչ իրավաչափ գործողությունների հետ, գ) ոստիկանների հանդեպ դրական՝ հպարտության, հիացմունքի, կարեկցանքի զգացումներ: Սակայն բնակչության հաղորդակցական վարքում այդ հուզական հակազդումները չեն նպաստում ոստիկանի դրական կերպարի ձևավորմանը: Այս երևույթը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հաղորդակցման յուրաքանչյուր ակտ ռեցի-

⁹ Տե՛ս Харитонов М. В. Реклама и PR в массовых коммуникациях. СПб., 2008, էջ 13:

¹⁰ Տե՛ս Андреева Г. М. Психология социального познания. М., 2000, էջ 245:

պիեմտի մեջ առաջացնում է երկու խումբ զգացումներ՝ մերձեցնող, միավորող (կոնյուկտիվային), որոնք շեշտը դնում են միավորումից մարդկանց մոտ առաջացող դրական ապրումների վրա, և բաժանող (դիզյունկտիվային), որոնք ներառում են մարդկանց հեռացնող զգացումներ¹¹: Ոստիկանների մասին ՁԼՄ-ների նյութերի առաջացրած հույզերը, հիմնականում բացասական երանգավորում ունենալով, բաժանող են և ունակ են խորացնելու հասարակության օտարումը ոստիկաններից, քանզի նպաստում են հասարակական գիտակցության մեջ կարգ պահպանողի կայուն բացասական կերպարի ձևավորմանը:

Անշուշտ, ոստիկանը չի կարող լրիվ խուսափել արդի հասարակության մեջ տարածված սոցիալական արատներից, քանզի ինքն էլ դրա անդամն է, բայց հաճախ ՁԼՄ-ները, մեծ տեղ տալով նրա մասնագիտական գործունեության ոչ բնականոն ձևերի ցուցադրմանը և բազմակողմանիորեն չվերլուծելով դրա վրա ազդող արդի հասարակական կյանքի գործընթացները, ակնհայտորեն ուռճացնում են ոստիկանների չարաշահումների մասշտաբները՝ կործանարար ներգործություն ունենալով կարգ պահպանողի կերպարի վրա: Քրեական քրոնիկոնին չափից շատ անդրադարձը, դեպքերին բարձր հուզականություն հաղորդելը, ոստիկանների ավելորդ քննադատությունը, նրանց գործունեության մասին դրական տեղեկությունների պակասը նպաստում են իրավական ոլորտի վերաբերյալ մտացածին պատմությունների ստեղծմանն ու տարածմանը հասարակության մեջ: Ոստիկանի գործունեության մակերեսային, չփաստարկված վերլուծությունը լրատվամիջոցներում, ինչպես նաև այդ տեղեկությունն ընկալող քաղաքացիների ոչ կոմպետենտությունը խեղաթյուրում են իրականությունը՝ հանգեցնելով սխալ եզրակացությունների: Փաստորեն, մերօրյա ՁԼՄ-ները ոչ միայն չեն նպաստում ոստիկանի դրական կերպարի ձևավորմանը, այլև հաճախ կարող են հակառակ ազդեցությունն ունենալ:

Այսպիսով, ակնհայտ է, որ բնակչության մեջ ոստիկանի կերպարի համարժեք ընկալման գործում զանգվածային լրատվամիջոցները էական դեր են կատարում, ուստի կարելի է ենթադրել, որ ոստիկանի դրական կերպարի ձևավորման արդյունավետությունը դրանց միջոցով կարող է բավականին բարձր լինել: Միաժամանակ, զանգվածային լրատվամիջոցները կարող ենք դիտել ոչ միայն ոստիկանի կերպարի վրա լրջորեն անդրադարձող գործոն, այլև այդ կերպարի հետազոտության համար միջնորդավորված միջոց:

Ի մի բերելով ոստիկանի կերպարի վրա ազդող գործոնները՝ կարելի է խմբավորել դրանք՝ առանձնացնելով ոստիկանի անձին, մասնագիտական գործունեությանը, հասարակություն-ոստիկանություն հարաբերություններին վերաբերող գործոնների խմբերը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցները՝ որպես ոստիկանի կերպարի ձևավորման վրա անդրադարձող առանձին գործոն:

Այսպիսով, մեր հասարակության շրջանում առկա ոստիկանի կերպարը տարաբնույթ գործոնների ազդեցության արդյունք է՝ սկսած ոստիկանության աշխատանքում մի շարք խնդիրների առկայությունից, մինչև զանգվա-

¹¹ Стів Харитонов М. В., 2014. 22 с., էջ 32:

ծային լրատվամիջոցների ունեցած դերը ոստիկանի կերպարի ընկալման վրա: Այդ գործոնների ուղղությամբ առավել համակարգված աշխատանքը հնարավորություն կընձեռի հասարակության մեջ ձևավորել ոստիկանի պատշաճ կերպար և բարձրացնել նրա հեղինակությունը՝ հասարակական կարծիքի վեկտորը տեղափոխելով կոնֆլիկտից ու անվստահությունից դեպի հարգանք և փոխըմբռնում՝ այդպիսով նպաստելով ոստիկանության և բնակչության համագործակցության սերտացմանը և, որպես հետևանք, ոստիկանի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

НАИРА НАЗАРЯН – Социально-психологические факторы, влияющие на имидж сотрудника полиции. – В статье рассмотрены основные социально-психологические факторы, влияющие на имидж полицейского, что обусловлено необходимостью укрепить авторитет полиции и сформировать адекватный образ ее сотрудника. Это, в свою очередь, повысит эффективность профессиональной деятельности полицейского.

NAIRA NAZARYAN – The Social-Psychological Factors Affecting the Image of a Policeman. – The main social-psychological factors affecting the image of a policeman are discussed in the article. The actuality of investigation is conditioned by the necessity of the formation of the improvement and the adequate image of the police. In our society the image of a policeman is formed under the influence of different factors which can be united in several groups. The investigation of those factors will allow working in the direction of the positive image of a policeman which will favour the increase of the effectiveness of the professional activity of a policeman.